# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱՊ-ՇՀԾՁԲ-20/1» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2017թ-ի մայիսի 20-ին կնքված N ՇՀԾՁԲ-20/1-1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի հոկտեմբերի 31-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

***Փոփոխության պատճառ:*** Պայմանագրի կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշել են պայմանագրի գնման և վճարման ժամանակացույցերում կատարել փոփոխություն:

***Փոփոխության նկարագրություն:*** Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ՇՀԾՁԲ-20/1-1 գնման պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը: Վճարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

***Փոփոխության հիմնավորում:*** Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 7.3 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԳՓՁ վարչության բաժնի պետ Ա. Գրիգորյանին:

**Հեռախոս՝ 010-29-44-18:**

**Էլ. փոստ՝ a.grigoryan@mil.am:**

**Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն:**

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1**
**N ՇՀԾՁԲ-20/1-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** 31 **-ը հոկտեմբերի 2017թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և Ա/Ձ Մեժլում Գրիգորյանը, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 20.05.2017թ. կնքված N ՇՀԾՁԲ-20/1-1 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.3 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

**1. Փոփոխության առարկան**

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին N ՇՀԾՁԲ-20/1-1 գնման պայմանագրի գնման ժամանակացույցով նախատեսված ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 2017թ. նոյեմբերի 1-ից տեղափոխել մինչև 2017թ. դեկտեմբերի 1-ը: Վճարման ժամանակացույցը թողնել անփոփոխ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ծառայության հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն<br>ք. Երևան Բագրևանդի 5<br>ՀՀ ՖՆ Ա գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 00867415<br>ՀՀ պաշտպանության նախարարության<br>ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ<br><br>Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Ա/Ձ Մեժլում Գրիգորյան<br>ք. Աբովյան, 4-րդ միկրոշրջան, 11 շենք, 20 բն.<br>«Ինեկորանկ» ՓԲԸ, Աբովյանի մասնաճյուղ<br>Հ/Հ 205113205384<br>ՀՎՀՀ 43078315<br><br>Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ |